ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ ՈՒՎԿ»
փակ բաժնետիրական ընկերության
միակ բաժնետիրոջ

19/10/2010թ. թիվ 1 որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում
«09» նոյեմբերի 2010թ.

Ընկերության գրանցման համարը՝ _թիվ 36_____

Փոփոխված է

«Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» փակ բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի կողմից
02/08/2011 թիվ 9-Լ

«Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» փակ բաժնետիրական ընկերության միակ բաժնետիրոջ կողմից
13/03/2012 թիվ 13-Լ

«Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» փակ բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի կողմից
25/06/2013թ. թիվ 23-Լ

«Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» փակ բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի կողմից
23/08/2013թ. թիվ 27-Լ

Փոփոխությունը գրանցված է

22/08/2011 թիվ 1/938Ա որոշմամբ

16/04/2012 թիվ 1/337Ա որոշմամբ

29/07/2013 թիվ 1/653Ա որոշմամբ

28/08/2013 թիվ 1/749Ա որոշմամբ

Միակ բաժնետեր
Վարդան Ենգիբարյան
_____
(ստորագրություն)

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ՝
Արթուր Ջավադյան
_____
(ստորագրություն)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ ՈՒՎԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Վարկային կազմակերպություն), ստեղծվել է Վարկային կազմակերպության հիմնադիր՝ ԱՄՆ քաղաքացի Վահե-Վասկեն Յաքուբյանի 28/05 /2010թ.-ի հիմնադիր որոշմամբ:
1.2 Իր գործունեության ընթացքում Վարկային կազմակերպությունը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Վարկային կազմակերպությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքներով (այսուհետ՝ Օրենք), սույն Կանոնադրությամբ և Վարկային կազմակերպության գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերով:
1.3 Վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Վարկային կազմակերպության բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով սովորական անվանական բաժնետոմսերի:
1.4 Վարկային կազմակերպությունը իրավաբանական անձ է, որը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի հիման վրա ՀՀ օրենսդրության և սույն կանոնադրության պահանջների համաձայն իրավունք ունի իրականացնել վարկային կազմակերպությունների գործունեություն:
1.5 Վարկային կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, իր ֆիրմային անվամբ կլոր կնիք՝ անգլերեն և հայերեն լեզուներով, կարող է ունենալ դրոշմներ և բլանկներ, ինչպես նաև՝ օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային և առևտրային նշաններ և իրավաբանական անձի համար անհրաժեշտ այլ վավերապայմաններ:
1.6 Վարկային կազմակերպության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, ՀՀ, ք.Երևան, Բուզանդի 7-11:
1.7 Վարկային կազմակերպության ֆիրմային անվանումն է.
հայերեն լրիվ՝ «ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» փակ բաժնետիրական ընկերություն,
անգլերեն լրիվ՝ “CREDIT CORP UNIVERSAL LENDING ORGANIZATION” closed joint-stock company.

Վարկային կազմակերպության կրճատ անվանումն է.
հայերեն՝ «ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ ՈՒՎԿ » ՓԲԸ,
անգլերեն՝ “CREDIT CORP ULO” CJSC.
1.8 Վարկային կազմակերպության բաժնետիրոջ և Վարկային կազմակերպության միջև հարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ:

Վարկային կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:
1.9 Վարկային կազմակերպությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար:
1.10 Վարկային կազմակերպության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

1.11 Վարկային կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտականությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

2. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

2.1 Վարկային կազմակերպության հիմնադրման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:
2.2 Վարկային կազմակերպությունն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները.
ա) ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել նմանատիպ գործարքներ, բացառությամբ հրապարակային օֆերտաների միջոցով միջոցների ներգրավման,
բ) տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,
գ) տրամադրել երաշխիքներ,
դ) թողարկել արժեթղթեր, ինչպես նաև իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքներ կատարել,
ե) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում,
զ) գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և մետաղադրամ,
է) մատուցել ֆինանսական խորհրդատվություն՝ իրականացնել տնտեսության ոլորտների շուկաների վերլուծություն, կազմել բիզնես ծրագրեր և այլն
ը) գնել ու վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ
թ) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),
թա) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր և այլ արժեքներ,
թբ) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,

թգ) Կենտրոնական բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված այլ գործառնություններ:
2.3 Վարկային կազմակերպությունը կարող է կնքել այնպիսի գործարքներ, որոնք դրամական (փողային) պարտավորություններ են առաջացնում Վարկային կազմակերպության համար, սակայն կապված չեն Վարկային կազմակերպության կողմից պարտատիրոջն ապրանքներ վաճառելու, ծառայություններ մատուցելու կամ

աշխատանքներ կատարելու հետ: Վարկային կազմակերպությունը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային և/կամ լիցենզավորման ենթակա այլ գործունեություն:
2.4 Վարկային կազմակերպությունը բոլոր ֆինանսական գործառնությունները կարող է կատարել ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կանխիկ ու անկանխիկ ձևով:
2.5 Վարկային կազմակերպությունն իրավունք ունի հաշիվներ բացել Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում գործող բանկերում՝ այդ մասին սահմանված ժամկետում տեղյակ պահելով ՀՀ Կենտրոնական բանկին:
2.6 Վարկային կազմակերպությունը հրապարակային օֆերտայի միջոցով փոխառություններ չի ներգրավում:

3. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Վարկային կազմակերպությունն ունի սույն Կանոնադրությամբ նախատեսված գործունեության նպատակներին համապատասխան քաղաքացիական իրավունքներ և կրում է այդ գործունեության հետ կապված պարտականություններ: Վարկային կազմակերպությունն իրեն պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում է իր հայեցողությամբ: Վարկային կազմակերպության կողմից այդ իրավունքների իրականացումից հրաժարվելը չի հանգեցնում այդ իրավունքների դադարման, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:
3.2 Վարկային կազմակերպությունը կարող է լինել այլ ընկերության (այդ թվում՝ դուստր և կախյալ) հիմնադիր (մասնակից), եթե դա արգելված չէ օրենսդրությամբ:
3.3 Վարկային կազմակերպությունն ունի ՀՀ գործող օրենսդրությամբ Վարկային կազմակերպությանը վերապահված իրավունքներ և կրում է պարտականություններ, անկախ դրանք սույն Կանոնադրությամբ նախատեսված լինելու հանգամանքից, եթե օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:
3.4 Վարկային կազմակերպությունն իրավունք ունի՝
3.4.1 ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,
3.4.2 Ինքնուրույն սահմանել իր կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների և մատուցվող ծառայությունների տոկոսադրույքները և սակագները, եթե ՀՀ կենտրոնական բանկի կողմից որոշակի սահմանափակումներ սահմանված չեն,
3.4.3 Օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, հանդես գալ որպես գրավառու և գրավատու,
3.4.4 Այլ պետություններում, նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք կամ լինել դրանց մասնակից, օգտվել օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից,
3.4.5 Օրենքով սահմանված կարգով իր անունից թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր:
3.4.6 Վարկային կազմակերպությունն ունի օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

3.5 Վարկային կազմակերպության իրավունքները կարող են սահմանափակվել միայն ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:
3.6 Վարկային կազմակերպությունը պարտավոր է՝
3.6.1 ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում և ներկայացնել ֆինանսական և այլ հաշվետվություններ,
3.6.2 Աշխատանքային պայմանագրեր կնքել Վարկային կազմակերպության աշխատակիցների հետ,
3.6.3 Հատուցել իր կողմից հասցված վնասը՝ կնքած պայմանագիրը չկատարելու կամ անպատշաճ կատարելու, այլ անձանց վնաս պատճառելու համար,
3.6.4 Ապահովել Վարկային կազմակերպության փաստաթղթերի (Վարկային կազմակերպության հիմնադիր փաստաթղթերի, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Վարկային կազմակերպության հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը:
3.6.5 Կրել օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Վարկային կազմակերպության գույքը հանդիսանում է նրա սեփականությունը:
4.2 Վարկային կազմակերպության սեփականության իրավունքի օբյեկտներն են՝
4.2.1 այն դրամական միջոցները, որոնք Վարկային կազմակերպության հիմնադիրները կատարել են, որպես բաժնետոմսերի դիմաց վճարումներ,
4.2.2 ստացված եկամուտները,
4.2.3 չբաշխված շահույթը,
4.2.4 գործող օրենսդրությամբ չարգելված հիմունքներով ձեռք բերված գույքը, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ գույքը:
4.3 Վարկային կազմակերպության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենսդրությանը համապատասխան չեն կարող պատկանել Վարկային կազմակերպությանը:
4.4 Վարկային կազմակերպության գույքը գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո: Ընկերության հիմնական և շրջանառու միջոցների առգրավումը չի թույլատրվում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
4.5 Պետական մարմինների, իրավաբանական անձանց կամ քաղաքացիների կողմից Վարկային կազմակերպությանը հասցված վնասը ենթակա է փոխհատուցման դատարանի որոշմամբ:

5. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԸ

5.1 Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը ձևավորվում է բաժնետերերի ներդրումների հաշվին և կազմում է 600.000.000 (վեց հարյուր միլիոն) ՀՀ դրամ: Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը բաժանված է 600.000 (վեց հարյուր հազար) հատ սովորական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 1000 (հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:
5.2 Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը սահմանում է Վարկային կազմակերպության Պարտատերերի շահերը երաշխավորող Վարկային կազմակերպության գույքի նվազագույն չափը: Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը չի կարող պակաս լինել Կենտրոնական բանկի կողմից հաստատված իրավական ակտերով սահմանված չափից:
5.3 Վարկային կազմակերպության բաժնետոմսերը տեղաբաշխված են փակ բաժանորդագրության միջոցով լրիվ վճարված և պատկանում են բաժնետերերին:
5.4 Վարկային կազմակերպությունը իրավունք ունի Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը, եթե նախկինում թողարկված բաժնետոմսերը լրիվ վճարվել են:
5.5 Ընկերության կանոնադրական կապիտալը կարող է ավելացվել նաև.
ա/ Ընկերության բաժնետերերի կողմից դրամական միջոցների լրացուցիչ ներդրումների հաշվին.
բ/ երրորդ անձանց կողմից լրացուցիչ ներդրումների հաշվին.
գ/ չբաշխված շահույթի հաշվին:
5.6 Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում բաժնետիրոջ կողմից լրացուցիչ ներդրումներ կատարելիս բաժնետերը սահմանված կարգով պարտավոր է դիմել ռեեստրավարին՝ Վարկային կազմակերպության բաժնետերերի ռեեստրում համապատասխան գրանցումներ կատարելու համար՝ ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթերը:
5.7 Վարկային կազմակերպության շահույթից մասհանումների հաշվին, ստեղծվում է գլխավոր պահուստ (պահուստային ֆոնդ) կանոնադրական կապիտալի 15%-ի չափով:
5.8 Եթե գլխավոր պահուստը կազմում է ավելի փոքր մեծություն, հատկացումներն այդ պահուստին կատարվում են տարեկան զուտ շահույթի առնվազն 5%-ի չափով:
5.9 Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ պահուստներ, որոնք նպատակ ունեն նպաստել Վարկային կազմակերպության տնտեսական զարգացմանը և Վարկային կազմակերպության աշխատակիցների սոցիալ-տնտեսական պահանջմունքների բավարարմանը:
5.10 Վարկային կազմակերպությունը իրավական ակտերով սահմանված կարգով ստեղծում է վարկերի, դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ծածկման պահուստներ:

6. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ

6.1 Վարկային կազմակերպությունը ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է թողարկել, ինչպես նաև իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքներ կատարել:
6.2 Վարկային կազմակերպության բաժնետոմսերը բաժնետերերի միջև տեղաբաշխվում են փակ բաժանորդագրությամբ, դրանց անվանական արժեքով կամ օրենքով սահմանված կարգով որոշվող շուկայական արժեքով:
6.3 Բաժնետոմսերը վճարվում են բացառապես ՀՀ դրամով: Վարկային կազմակերպության հիմնադրման ժամանակ տեղաբաշխվող բաժնետոմսերի արժեքը պետք է վճարվի ամբողջությամբ:
6.4 Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, Վարկային կազմակերպությունն իրավունք ունի տեղաբաշխել լրացուցիչ բաժնետոմսեր:
6.5 Վարկային կազմակերպության տեղաբաշխվող բաժնետոմսերի ձևը ոչ փաստաթղթային է:
6.6 Վարկային կազմակերպության բաժնետոմսերը տեղաբաշխվում են բաժնետերերի ռեեստրում բաժնետիրոջ անձնական հաշվում գրանցման տեսքով:
6.7 Վարկային կազմակերպությունն իրավունք ունի համախմբել (կոնսոլիդացնել) իր թողարկված (տեղաբաշխված) բաժնետոմսերը՝ ավելացնելով դրանց անվանական արժեքը կամ դրանք բաժանել ավելի փոքր անվանական արժեքով բաժնետոմսերի:
6.8 Բաժնետոմսն անբաժանելի է: Եթե երկու կամ ավելի անձինք սեփականատեր են մեկ բաժնետոմսի, ապա նրանք համարվում են մեկ բաժնետեր:
6.9 Վարկային կազմակերպության բաժնետոմսերի նկատմամբ նոր սեփականատիրոջ սեփականության իրավունքը ծագում, իսկ նախկին սեփականատիրոջ իրավունքը դադարում է բաժնետերերի սեփականատերերի ռեեստրում համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո:

7.ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1 Վարկային կազմակերպության բաժնետերեր են համարվում օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով սեփականության իրավունքով Վարկային կազմակերպության բաժնետոմսեր ձեռք բերած քաղաքացիները և իրավաբանական անձինք:
7.2 Վարկային կազմակերպության բաժնետերերի թիվը չպետք է գերազանցի 49-ը: Եթե նրանց թիվը 49-ից ավելի է դարձել, ապա Վարկային կազմակերպությունը մեկ տարվա ընթացքում պետք է վերակազմավորվի բաց բաժնետիրական ընկերության կամ համապատասխանաբար կրճատի բաժնետերերի քանակը: Հակառակ դեպքում այն ենթակա է լուծարման դատական կարգով:
7.3 Վարկային կազմակերպության յուրաքանչյուր սովորական բաժնետոմս դրա սեփականատեր բաժնետիրոջը տալիս է միևնույն իրավունքները:
7.4 Վարկային կազմակերպության սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը օրենքով և սույն Կանոնադրութամբ սահմանված կարգով իրավունք ունեն՝

ա) մասնակցել Վարկային կազմակերպության ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, հանդես գալ առաջարկություններով և քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,
բ) մասնակցել Վարկային կազմակերպության կառավարմանը,
գ) մասնակցել Վարկային կազմակերպության շահույթի բաշխմանը և ստանալ շահութաբաժիններ Վարկային կազմակերպության գործունեությունից առաջացած շահույթից,
դ) առաջնահերթության կարգով ձեռք բերել Վարկային կազմակերպության կողմից լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ,
ե) նախապատվության իրավունքով ձեռք բերել Վարկային կազմակերպության բաժնետոմսերը այլ բաժնետերերի կողմից բաժնետոմսերի վաճառքի վերաբերյալ առաջարկը ստանալուց հետո 30-60 օրվա ընթացքում,
զ) Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
է) հայցով դիմել դատարան՝ Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և ՀՀ գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների գանգատարկման նպատակով,
ը) Վարկային կազմակերպության կողմից իրեն վճարվող շահութաբաժնի հաշվին ձեռք բերել համապատասխան քանակությամբ լրացուցիչ սովորական բաժնետոմսեր,
թ) Վարկային կազմակերպության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած գույքի մասը կամ դրա արժեքը,
ժ) ընտրել և ընտրվել Վարկային կազմակերպության ընտրովի մարմիններում,
ժա) առաջարկություններ ներկայացնել Վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն և այլ մարմինների քննարկմանը,
ժբ) տեղեկատվություն ստանալ Վարկային կազմակերպության գործունեության մասին և ցանկացած ժամանակ ծանոթանալ նրա հաշվապահական գրքերին ու այլ փաստաթղթերին, բացառությամբ՝ գաղտնի փաստաթղթերի:

Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի առնվազն 5% կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերը կարող են պահանջել Վարկային կազմակերպության ֆինանսական գործունեության ստուգում աուդիտորի կողմից: Այս դեպքում աուդիտորի ծառայությունները վճարում է ստուգում պահանջող բաժնետերը: Վարկային կազմակերպության բաժնետերերը կարող են ունենալ նաև օրենքով և Վարկային կազմակերպության ընդհանուր ժողովի կողմից սահմանված այլ իրավունքներ:

7.5 Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին չի կարող տրամադրվել նրանց պատկանող սովորական բաժնետոմսերի քանակից ավել ձայնի իրավունք: Սովորական բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումները Վարկային կազմակերպության կողմից չեն երաշխավորվում: Սովորական բաժնետոմսերի տեսակարար կշիռը Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում չպետք է պակաս լինի 75 տոկոսից: Վարկային կազմակերպության կողմից թողարկված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը: Վարկային կազմակերպության բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերը կարող է բաժնետոմսերն օտարել միայն օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով՝ այդ մասին նախապես ծանուցելով մյուս բաժնետերերին:

7.6 Եթե Կանոնադրությամբ նախատեսված ժամկետում Վարկային կազմակերպության բաժնետերերից ոչ մեկը չի օգտվում 7.4. կետի դ) և ե) ենթակետերով նախատեսված նախապատվության իր իրավունքից, ապա Վարկային կազմակերպությունն իրավունք ունի այդ բաժնետոմսերը ձեռք բերել սեփականատիրոջ հետ համաձայնեցված գնով: Վարկային կազմակերպության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու կամ դրանց գնի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձի: Վարկային կազմակերպության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելու կամ դրանից հրաժարվելու մասին որոշումը կայացնում է բաժնետերերի ընդհանուր ժողովը:

Բաժնետերերի նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը չի կիրառվում այն դեպքում, երբ իրենց բաժնետոմսերը կամ դրանց մի մասը օտարելու ցանկություն են հայտնել Վարկային կազմակերպության բոլոր բաժնետերերը միաժամանակ:

7.7 Վարկային կազմակերպության բաժնետերերը պարտավոր են՝

ա) սույն Կանոնադրությամբ սահմանված ժամկետներում լրիվ վճարել իրենց բաժնետոմսերի արժեքը,

բ) ձեռնպահ մնալ Վարկային կազմակերպության հաճախորդների և Վարկային կազմակերպության գործունեության վերաբերյալ գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հրապարակումից կամ այլ կերպ այլ անձանց դրանք հայտնի դարձնելուց: Վարկային կազմակերպության բաժնետերերը կարող են ունենալ օրենքով և Վարկային կազմակերպության ընդհանուր ժողովի կողմից սահմանված այլ պարտավորություններ:

7.8 Վարկային կազմակերպության բաժնետոմսերը կարող են գրավ դրվել և բռնագանձվել ՀՀ օրենքներով սահմանված կարգով:

7.9 Վարկային կազմակերպության բաժնետոմսերն անցնում են բաժնետեր-քաղաքացու ժառանգներին կամ բաժնետեր-իրավաբանական անձի իրավահաջորդներին:

8.ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ, ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԸ

8.1 Վարկային կազմակերպությունն ինքնուրույն է տնօրինում իր տրամադրության տակ մնացած չբաշխված շահույթը: Այն օգտագործվում է սույն Կանոնադրությանը և Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներին համապատասխան:

8.2 Վարկային կազմակերպությունն իրավունք ունի հայտարարել (որոշում ընդունել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

8.3 Վարկային կազմակերպությունը պարտավոր է վճարել բաժնետոմսերի յուրաքանչյուր ձևի և տեսակի համար հայտարարված շահութաբաժինները՝ ՀՀ դրամով:

8.4 Շահութաբաժինները վճարվում են տվյալ տարվա ընթացիկ զուտ շահույթից՝ տարեկան և (կամ) միջանկյալ (եռամսյակային, կիսամյակային) շահութաբաժինների վճարման ձևով:

8.5 Ըստ բաժնետոմսերի տեսակների և ձևերի միջանկյալ շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի, դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է

Վարկային կազմակերպության խորհրդի կողմից՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 49 հոդվածին համապատասխան:
8.6 Ըստ բաժնետոմսերի տեսակների և ձևերի տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ խորհրդի առաջարկությամբ:
Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից պակաս լինել:
8.7 Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է նաև որոշում ընդունել բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու մասին՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 49 հոդվածին համապատասխան:
8.8 Տարեկան շահութաբաժինների վճարման ամսաթիվը սահմանվում է Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի տարեկան շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ամսաթիվը սահմանվում է Վարկային կազմակերպության խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:
8.9 Տարեկան շահութաբաժինների չափն արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար լինելու դեպքում տարեկան շահութաբաժին չի վճարվում: Ավել լինելու դեպքում վճարվում է տարբերությունը:
8.10 Վարկային կազմակերպության բաժնետերերին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե՝
ա) լրիվ չի վճարվել Վարկային կազմակերպության հայտարարված կանոնադրական կապիտալը,
բ) տվյալ պահին Վարկային կազմակերպության կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են այդ պահին Վարկային կազմակերպությունում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը,
գ) շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Վարկային կազմակերպության տնտեսական վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկացման) հայտանիշներին կամ նշված հայտանիշներն ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով,
դ) Վարկային կազմակերպության զուտ ակտիվների արժեքը պակաս է նրա կանոնադրական կապիտալից կամ շահութաբաժիններ վճարելու արդյունքում կպակասի դրա չափից:

9.ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

9.1 Վարկային կազմակերպության կառավարման մարմիններն են՝

- Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովը,
- Վարկային կազմակերպության տնօրենների (դիտորդ) խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ),
- Վարկային կազմակերպության տնօրենը:

9.2 *Բաժնետերերի ընդհանուր ժողովը*
9.2.1 Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովը Վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմին է:

9.2.2 Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:
9.2.3 Անհետաձգելի հարցերի քննարկման համար կարող է գումարվել բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով:

Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը գումարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով:
9.2.4 Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ՝ Վերստուգիչ հանձնաժողովի (Վերստուգողի), Վարկային կազմակերպության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ ընկերության առնվազն 10 տոկոս ձայնի իրավունք ունեցող սեփականատեր հանդիսացող բաժնետերերի պահանջով:
9.2.5 Բաժնետերերի ընդհանուր ժողովում սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերն ունեն Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում իրենց կողմից վճարված սովորական բաժնետոմսերին համամասնորեն ձայնի իրավունք:
9.2.6 Բաժնետերը Բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով:
9.2.7 Վարկային կազմակերպության Բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է, եթե ժողովին ներկա են տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50 տոկոսից ավելին տիրապետող բաժնետերերը կամ իրենց լիազոր ներկայացուցիչները:
9.2.8 Բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություններն են՝
ա) Վարկային կազմակերպության Կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Վարկային կազմակերպության Կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
բ) Վարկային կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,
գ) Վարկային կազմակերպության լուծարման մասին որոշման ընդունումը,
գա)լուծարային հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարային հաշվեկշիռների հաստատումը,
դ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
ե) բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,
եա) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման միջոցով Վարկային կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Վարկային կազմակերպության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,
զ) Վարկային կազմակերպության վերստուգող հանձնաժողովի անդամների (Վերստուգողի) ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
է) Վարկային կազմակերպության աուդիտն անցկացնող անձի հաստատումը,
ը) Վարկային կազմակերպության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթի և վնասի բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը, տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը, Վարկային կազմակերպության

մասնաճյուղերի և ներկայացուցչությունների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը,
թ) ընդհանուր ժողովի վարման կարգի սահմանումը և հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը օրենքով սահմանված դեպքերում,
թա) Վարկային կազմակերպության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը,
թբ) օրենքով սահմանված դեպքերում՝ Վարկային կազմակերպության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված շահագրգիռ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը,
թբա) օրենքով սահմանված դեպքերում՝ Վարկային կազմակերպության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը,
թգ) Վարկային կազմակերպության ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը,
թդ) Վարկային կազմակերպության բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացումը և մեծացումը,
թդա) բաժնետոմսերի բաժանումը և համախմբումը (կոնսոլիդացիան),
թդբ) Վարկային կազմակերպության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը Օրենքի համաձայն,
թե) Վարկային կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,
թեա) Վարկային կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ օրենքով նախատեսված դեպքերում,
թզ) օրենքով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:
ժ) Վարկային կազմակերպությունում խորհուրդ ստեղծելը, խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարումը: Վարկային կազմակերպության խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես Վարկային կազմակերպության բաժնետերերի տարեկան ժողովներում:
9.2.9 Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել Վարկային կազմակերպության վերստուգող հանձնաժողովի անդամները, խորհրդի անդամները, Վարկային կազմակերպության տնօրենը:
9.2.10 Ընդհանուր ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցվում է ժողովի նշանակված օրվանից առնվազն 10 օր առաջ՝ նամակների և/կամ ֆաքսի միջոցով:
9.2.11 Վարկային կազմակերպության Բաժնետերերի ընդհանուր ժողովի ավարտից հետո 5 օրվա ընթացքում երկու օրինակով կազմվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրություն, որը պարունակում է ժողովում կայացած ելույթների ընդհանուր դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, ժողովի ընդունած որոշումները:
9.2.12 Սույն Կանոնադրության 9.2.8 կետում նշված իրավասությունները հանդիսանում են ժողովի բացառիկ իրավասությունները և չեն կարող փոխանցվել Վարկային կազմակերպության խորհրդին կամ Վարկային կազմակերպության տնօրենին՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

9.2.13 Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:
9.2.14 Եթե Վարկային կազմակերպության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր կամ անվանատեր է հանդիսանում միայն մեկ անձ, ապա ժողովի որոշումներն ընդունվում են այդ անձի գրավոր որոշմամբ:

9.3 *Վարկային կազմակերպության խորհուրդը*

9.3.1 Վարկային կազմակերպության խորհուրդն իրականացնում է Վարկային կազմակերպության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով և սույն Կանոնադրությամբ վերապահված են Բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը:
9.3.2 Վարկային կազմակերպության Խորհրդի անդամներն ընտրվում են Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում, 3 տարի ժամկետով, բաժնետերերի կողմից: Խորհրդի կազմում կարող են ընտրվել նաև Վարկային կազմակերպության բաժնետեր չհանդիսացող անձինք, ինչպես նաև Վարկային կազմակերպության գործադիր մարմնի ներկայացուցիչները, որոնք չեն կարող մեծամասնություն կազմել:

9.3.3 Վարկային կազմակերպության խորհուրդը՝
ա) որոշում է Վարկային կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունները,
բ) սահմանում է գործադիր մարմնի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգը և պայմանները,
գ) օրենքով սահմանված կարգով Վարկային կազմակերպության անունից և Վարկային կազմակերպության հաշվին տեղաբաշխում է պարտատոմսեր և այլ արժեթղթեր,
դ) օրենքով սահմանված կարգով որոշում է գույքի շուկայական արժեքը,
ե) ժողովի համար նախապատրաստում է առաջարկություններ Վարկային կազմակերպության վերստուգող հանձնաժողովի (Վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ,
զ) սահմանում է Վարկային կազմակերպության աուդիտ անցկացնող անձի վարձատրության չափը,
է) ընդհանուր ժողովի համար նախապատրաստում է առաջարկություններ Վարկային կազմակերպության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահաբաժինների չափի և վճարման վերաբերյալ,
ը) որոշում է կայացնում Վարկային կազմակերպության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործման վերաբերյալ,
թ) հաստատում է Վարկային կազմակերպության և կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթեր,
ժ) կնքում է Վարկային կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքներ (ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50%-ի չափով)՝ օրենքով նախատեսված դեպքերում,
ժա) հաստատում է Վարկային կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը,
ժբ) հաստատում է Վարկային կազմակերպության հաստիքացուցակը,

ժգ) իրականացնում է սույն Կանոնադրությամբ և օրենսդրությամբ սահմանված այլ իրավասություններ:
9.3.4 Վարկային կազմակերպության Խորհրդի նիստերը հրավիրվում են նրա նախագահի կողմից՝ ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ: Խորհրդի նիստերը կարող են գումարվել Վարկային կազմակերպության վերստուգողի, աուդիտն իրականացնող անձի, Վարկային կազմակերպության տնօրենի պահանջով:
9.3.5 Վարկային կազմակերպության խորհրդի նախագահը՝
ա) կազմակերպում է Վարկային կազմակերպության Խորհրդի աշխատանքները,
բ) գումարում է Վարկային կազմակերպության Խորհրդի նիստերը և նախագահում դրանք,
գ) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը:
Վարկային կազմակերպության Խորհրդի նախագահն ընտրվում է Վարկային կազմակերպության խորհրդի անդամների կողմից՝ Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Վարկային կազմակերպության Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ Վարկային կազմակերպության Խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:
9.3.6 Վարկային կազմակերպության Խորհրդի նիստերի քվորումը չի կարող Խորհրդի անդամների կեսից պակաս լինել: Եթե խորհրդի անդամների թիվը նվազում է Խորհրդի անդամների թվի կեսից, ապա Վարկային կազմակերպությունը պետք է այն լրացնելու նպատակով արտահերթ ժողով գումարի, որի մասին որոշումը կայացնում է Վարկային կազմակերպության Խորհուրդը:
9.3.7 Վարկային կազմակերպության Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Քվեարկության ժամանակ Վարկային կազմակերպության Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Վարկային կազմակերպության Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայն:
9.4 *Վարկային կազմակերպության տնօրենը՝*
9.4.1 Վարկային կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Վարկային կազմակերպության տնօրենը: Վարկային կազմակերպության տնօրենը հաշվետու է Վարկային կազմակերպության Խորհրդին և բաժնետերերի ընդհանուր ժողովին:
9.4.2 Վարկային կազմակերպության տնօրենը՝
ա) տնօրինում է Վարկային կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Վարկային կազմակերպության անունից,
բ) ներկայացնում է Վարկային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,
գ) տալիս է լիազորագրեր,
դ) գործում է Վարկային կազմակերպության անունից առանց լիազորագրի,
ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
զ) Վարկային կազմակերպության ժողովի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում Վարկային կազմակերպության աշխատանքային կանոնակարգը, տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունները (առկայության դեպքում),
է) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

ը) օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և ազատում Վարկային կազմակերպության աշխատակիցներին,
թ) Վարկային կազմակերպության աշխատակիցների նկատմամբ անհրաժեշտության դեպքում կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
ժ) որոշում է կադրերի ընտրության, տեղաբաշխման և վերապատրստաման հարցերը,
ի) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ այլ իրավասություններ:
10.4.3 Վարկային կազմակերպության տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Վարկային կազմակերպության: Նա պարտավոր է Վարկային կազմակերպության բաժնետերերի պահանջով հատուցել իր կողմից Վարկային կազմակերպությանը պատճառած վնասները, եթե այլ բան չի նախատեսված օրենքով կամ պայմանագրով:
9.4.4 Վարկային կազմակերպության տնօրենը գործում է ՀՀ օրենսդրությամբ, այլ իրավական ակտերի և սույն Կանոնադրության հիման վրա:
9.4.5 Վարկային կազմակերպության տնօրենը կազմակերպում է Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումների կատարումը:
9.4.6 Վարկային կազմակերպության տնօրենի իրավունքները և պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն Կանոնադրությամբ:
9.4.7 Վարկային կազմակերպության տնօրենի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրա պարտականությունները կատարում է վարկային բաժնի պետ-տնօրենի տեղակալը:
9.4.8 Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը իրականացնում է Ընկերության՝
ա) ՀՀ գործող օրենսդրությանը և Վարկային կազմակերպության ներքին կանոններին համապատասխան, հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների վարումը,
բ) Վարկային կազմակերպության ամենօրյա հաշվեկշռի կազմումը,
գ) Վարկային կազմակերպության կողմից կատարվող գործառնությունների հաշվապահական վերահսկողությունը,
դ) սահմանված կարգով Վարկային կազմակերպության կողմից ՀՀ լիազորված մարմիններին, ինչպես նաև բաժնետերերին ֆինանսական, հարկային և այլ հաշվետվությունների կազմումը և սահմանված ժամկետներում դրանց ներկայացումը, դրանցում արտացոլվող տվյալների արժանահավատության ապահովումը,
ե) սահմանված կարգով և ժամկետներում Վարկային կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների հրապարակումը,
զ) Վարկային կազմակերպության աշխատողների աշխատավարձի հաշվարկը,
է) Վարկային կազմակերպության մասնաճյուղերի և տարածքային այլ ստորաբաժանումներում հաշվապահական հաշվառման վարման և գործառնությունների գրանցման վերահսկումը,
ը) Վարկային կազմակերպության կառավարման մարմինների հանձնարարականների կատարումը:

10.ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

10.1 Վարկային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնում է Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընտրված վերստուգող հանձնաժողովը (Վերստուգողը):
10.2 Վարկային կազմակերպության վերստուգող հանձնաժողովի (Վերստուգողի) իրավասությունները սահմանվում են օրենքով, սույն Կանոնադրությամբ և վերստուգող հանձնաժողովի գործունեության մասին կանոնակարգով, որը հաստատվում է Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:
10.3 Վարկային կազմակերպության վերստուգող հանձնաժողովը (Վերստուգողը) ընտրվում են բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ 3 տարի ժամկետով: Վարկային կազմակերպության տնօրենը չի կարող միաժամանակ լինել վերստուգող հանձնաժողովի անդամ: Վերստուգող հանձնաժողովի նախագահը ընտրվում է հանձնաժողովի անդամների կողմից: Վերստուգող հանձնաժողովի նախագահը և նրա անդամները պետք է համապատասխանեն ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված որակավորման ու մասնագիտական համապատասխանության չափանիշներին:
10.4 Վարկային կազմակերպության վերստուգող հանձնաժողովը հետևում է Վարկային կազմակերպության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Վարկային կազմակերպության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, այլ իրավական ակտերին և սույն Կանոնադրությանը:
10.5 Վարկային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերստուգումն ու ստուգումը կատարվում է ինչպես ըստ վերստուգող հանձնաժողովի հաստատված ժամանակացույցի, այնպես էլ բաժնետերերի ընդհանուր ժողովի, կամ 10 տոկոսից ավելի բաժնետոմս ունեցող բաժնետերերի պահանջով:
10.6 Վերստուգումը կատարվում է ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, ընդհանուր ժողովի պահանջով կամ Վերստուգողի սեփական նախաձեռնությամբ: Վերստուգողն իրավունք ունի Վարկային կազմակերպության պաշտոնատար անձանցից պահանջելու իրեն ներկայացնել բոլոր անհրաժեշտ նյութերը, անձնական բացատրությունները:
10.7 Վարկային կազմակերպության վերստուգող հանձնաժողովը հաշվետու է Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովին: Վերստուգող հանձնաժողովի անդամ կարող են ընտրվել Վարկային կազմակերպության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած գործունակ ֆիզիկական անձինք:

10.8 Վերստուգող հանձնաժողովը՝
ա) Վարկային կազմակերպությունը հսկողություն է սահմանում հաշվապահական հաշվառման և հաշվետվության վարման նկատմամբ,
բ) Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովին հաշվետվություն է ներկայացնում օրենքներին և այլ իրավական ակտերին Վարկային կազմակերպության գործունեության համապատասխանության, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի հանձնարարականները սահմանված ժամկետում կատարելու մասին,
գ) եզրակացություններ է տալիս Վարկային կազմակերպության բաժնետերերի ժողովի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ,

դ) իրականացնում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, վերստուգող հանձնաժողովի կանոնակարգով, ինչպես նաև օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:
10.9 Վերստուգող հանձնաժողովի արդյունքներից ելնելով՝ վերստուգող հանձնաժողովը իրավունք ունի պահանջել Վարկային կազմակերպության բաժնետերերի արտահերթ ժողովի հրավիրում, ինչպես նաև վերջինիս պահանջով նրանց պետք է ներկայացվեն Վարկային կազմակերպության, դրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:
10.10 Վերստուգող հանձնաժողով չձևավորվելու դեպքում՝ նրա լիազորություններն իրականացնում է Վերստուգողը:

11.ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԸ

11.1 Վարկային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով յուրաքանչյուր տարի ընտրվում է անկախ աուդիտորական կազմակերպություն:
11.2 Անկախ աուդիտորական ընկերությանն ընտրում է Վարկային կազմակերպության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որի հետ աուդիտորական ծառայությունների մասին պայմանագիր է կնքում նրա կողմից լիազորված Վարկային կազմակերպության կառավարման այլ մարմին:
11.3 Վարկային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն աուդիտն իրականացնող անձի կողմից կարող է իրականացվել նաև Վարկային կազմակերպության՝ քվեարկող բաժնետերերի առնվազն 5 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի պահանջով: Այդ դեպքում աուդիտորի ծառայությունները վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը:

12.ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12.1 Վերստուգողը կամ Վարկային կազմակերպության արտաքին աուդիտն իրականացնող անձը Վարկային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում են եզրակացություններ, որոնք պետք է պարունակեն՝
ա) Վարկային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը,
բ) Վարկային կազմակերպության հիմնադրամների կազմավորման և դրանց նպատակային օգտագործման վերլուծությունը,
գ) Վարկային կազմակերպության հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակող տեղեկությունների հավաստիության հաստատումը,
դ) Վարկային կազմակերպության կառավարման մարմինների որոշումների, հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և այլ հաշվետվության համապատասխանության հաստատումը գործող օրենքներին և այլ իրավական ակտերին,

ե) ստուգման առանձնահատկությունների հետ կապված այլ տեղեկատվություններ:
12.2 Վերստուգողը Վարկային կազմակերպության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է տարեկան ընդհանուր ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշռի և ֆինանսական հաշվետվությունների հաստատման ժամանակ Վերստուգողի եզրակացությունը պարտադիր է:

13.ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ, ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13.1 Վարկային կազմակերպությունն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններ:
13.2 Վարկային կազմակերպությունը կազմում և ՀՀ Կենտրոնական բանկ է ներկայացնում տարեկան, եռամսյակային և այլ ֆինանսական հաշվետվություններ՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևերով և պարբերականությամբ:
13.3 Հաշվապահական հաշվառումը Վարկային կազմակերպությունում իրականացվում է ՀՀ Կենտրոնական բանկի և կառավարության լիազորած մարմնի հետ համաձայնեցված կարգով՝ միջազգային ստանդարտներին համապատասխան:
13.4 Վարկային կազմակերպությունը կազմում և օրենսդրությամբ սահմանված ժամկետներում մամուլում հրապարակում է տարեկան և եռամսյակային ֆինանսական հաշվետվություններ՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով:
13.5 Վարկային կազմակերպության գործառնական տարին սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

14 ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ, ԴՈՒՍՏՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14.1 Վարկային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում կարող է հիմնել իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնելու դեպքում՝ կարող են գործել ՀՀ կենտրոնական բանկում հաշվառվելուց հետո, իսկ արտասահմանում՝ տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները:
14.2 Վարկային կազմակերպությունը հաստատում է իր մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները, որտեղ սահմանվում է նրանց լիազորությունները և լուծարման կարգը:
14.3 Վարկային կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը, հաշվառումը և լուծարումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով:
14.4 Վարկային կազմակերպության մասնաճյուղը գործում է Վարկային կազմակերպության կողմից տրված լիազորությունների սահմաններում, նրա անունից և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ֆինանսական գործառնություններ է իրականացնում

(ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով), որոնք նախատեսվում են մասնաճյուղի կանոնադրությամբ:
14.5 Վարկային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում կարող է հիմնադրել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր կազմակերպություններ և մասնակցել դրանցում, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնելու դեպքում գրանցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ արտասահմանում՝ տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները:

15.ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

15.1 Վարկային կազմակերպության գործունեությունը դադարում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ինքնալուծարման, լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու, անվճարունակության հետևանքով և օրենքով նախատեսված այլ հիմքերով լուծարվելու դեպքերում: Վարկային կազմակերպության գործունեությունը դադարում է նաև վերակազմակերպման (միաձուլման, վերակազմավորման) միջոցով:
15.2 Վարկային կազմակերպության վերակազմակերպումը կատարվում է Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությամբ, ինչպես նաև դատարանի որոշմամբ ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում:
15.3 Վարկային կազմակերպության լուծարումն իրականացվում է Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովում հաստատված լուծարային նախագծին, կամ Վարկային կազմակերպության սնանկացման դեպքում՝ օրենսդրությանը համապատասխան:
15.4 Պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետը սահմանվում է լուծարման մասին մամուլում օրենքով սահմանված կարգով հրապարակվող հայտարարության մեջ:
15.5 Վարկային կազմակերպության լուծարային հանձնաժողովը ստեղծվում է համաձայն Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշման: Այն կազմվում է առնվազն 3 անդամներից:
15.6 Լուծարային հանձնաժողովը առնվազն ամիսը մեկ անգամ ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվետվություն իր գործունեության վերաբերյալ, ինչպես նաև նրա կողմից սահմանված այլ տեղեկություններ:
15.7 Վարկային կազմակերպության լուծարման դեպքում նրա բոլոր դրամական միջոցները, ներառյալ Վարկային կազմակերպության գույքի իրացումից ստացված հասույթը, ուղղվում է Վարկային կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հերթականությամբ, իսկ մնացած մասով օրենքով սահմանված հերթականությամբ բաշխվում է Վարկային կազմակերպության բաժնետերերի միջև նրանց պատկանող բաժնետոմսերի տեսակներին ու քանակին համամասնորեն:
15.8 Վարկային կազմակերպությունը համարվում է լուծարված լուծարային հանձնաժողովի կողմից իր գործունեության արդյունքների վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունը վերջինիս կողմից հաստատելուց

հետո: Վարկային կազմակերպության լուծարման մասին ՀՀ կենտրոնական բանկում վարվող Վարկային կազմակերպությունների գրանցման մատյանում և ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում համապատասխան գրանցում է կատարվում:
15.9 Լուծարային հանձնաժողովը Վարկային կազմակերպության լուծարման վերաբերյալ հրապարակում է տեղեկանք:

16.ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

16.1 Վարկային կազմակերպության Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև Վարկային կազմակերպության՝ նոր խմբագրությամբ Կանոնադրության հաստատելը տեղի է ունենում բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է ժողովին մասնակցած քվեարկող բաժնետերերի ձայների 3/4-ով:
16.2 Վարկային կազմակերպության մասնաճյուղի և ներկայացուցչության ստեղծման կամ գործունեության դադարեցման հետ կապված տեղեկությունները ներառվում են Վարկային կազմակերպության Կանոնադրության մեջ: Այդ տեղեկությունների հետ կապված Կանոնադրության փոփոխություններն ուժի մեջ են մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելու պահից:
16.3 Վարկային կազմակերպության Կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև Վարկային կազմակերպության նոր խմբագրությամբ Կանոնադրությունը երրորդ անձանց համար ուժի մեջ են մտնում դրանց ՀՀ կենտրոնական բանկում գրանցման պահից: Սակայն Վարկային կազմակերպությունը և նրա բաժնետերերը նման փոփոխությունները հաշվի առած երրորդ անձանց հետ ունեցած հարաբերություններում իրավունք չունեն վկայակոչել այդ փոփոխությունների գրանցման բացակայությունը:

Համարակալված, կնքված և կարված է

-20- (քսան) էջ:

նշել թվերով նշել տառերով

ԻՎ Լիցենզավորման ու գրանցման I բաժնի պետ՝

Համլիկ Խաչատրյան _____

անուն, ազգանուն ստորագրություն

Վերիֆիկատոր

_____ _____

անուն, ազգանուն ստորագրություն